ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2016թ. **N ----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՌԱՖԱՅԵԼ ԱՐՏՅՈՄԻ ՔՈԹԱՆՋՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի 2798-րդ տարեդարձի առթիվ, ստեղծագործական ակնառու հաջողությունների, թատերարվեստում ներդրած նշանակալի ավանդի և բազմամյա վաստակի համար դերասան, ՀՀ ժողովրդական արտիստ Ռաֆայել Արտյոմի Քոթանջյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՌԱՖԱՅԵԼ ԱՐՏՅՈՄԻ ՔՈԹԱՆՋՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռաֆայել Արտյոմի Քոթանջյանը ծնվել է 1942 թվականին:

1958 թվականին ավարտել է Երևանի Մայակովսկու անվան դպրոցը:

1964 թվականին ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետը:

1964-1966 թվականներին որպես դերասան և ռեժիսոր աշխատել է Զանգեզուրի Շիրվանզադեի անվան թատրոնում:

1966 թվականին եղել է «Արշալույս» երիտասարդական թատրոնի հիմնադիրներից մեկը:

1970 թվականին ավարտել է Մոսկվայի հեռուստատեսային բարձրագույն ռեժիսորական կուրսերը: Աշխատել է Երևանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում՝ որպես դերասան և ռեժիսոր:

1980 թվականին արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր արտիստի կոչմանը, 2002 թվականին՝ ՀՀ ժողովրդական արտիստի կոչմանը, ՀՀ Մովսես Խորենացու մեդալի, ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալի, վարպետի ոսկե մեդալի և Սոֆյա Տախալովայի ոսկե աստղի:

2008 թվականից Բնության և բնական գիտությունների միջազգային ակադեմիայի իսկական անդամ է:

Խաղացել է բազմաթիվ ներկայացումներում՝ «Սատանայի ջրաղաց», «Մեր և ծիծաղ», «Համլետ», «Խղճուկ թագավորության խղճուկ ժամանակներ», «Աստվածների կանչը», «Մեծ լռություն», «Լուիջիի սիրտը» և այլն:

Նկարահանվել է բազմաթիվ տեղական և արտասահմանյան ֆիլմերում՝ «Կտոր մը երկինք», «Տղամարդիկ», «Դաժան խաղեր», «Ծովահենների թագավորությունը», «Մեր բակը», «Կոմսուհի դը Մոնսորո», «Մի նայիր հայելու մեջ», «Երեքի սիրտը» և այլն:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով թատերարվեստում Ռաֆայել Քոթանջյանի ներդրած նշանակալի ավանդը և բազմամյա վաստակը, առաջարկվում է Ռաֆայել Արտյոմի Քոթանջյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՌԱՖԱՅԵԼ ԱՐՏՅՈՄԻ ՔՈԹԱՆՋՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ռաֆայել Արտյոմի Քոթանջյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՌԱՖԱՅԵԼ ԱՐՏՅՈՄԻ ՔՈԹԱՆՋՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ռաֆայել Արտյոմի Քոթանջյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ